

2378

3110 5
ft 65

3172



2378

2378

XVI H.

0116 - 29 / xy 15

- 10x10s -

2011

629
Ենուանի ց. Գուգո Ամերիկա

Խաղաղի:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԻՊԱՇԽԱՐՀ

Ա.

17 հուն. 89.
Բայցու:

ՎԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Գերմաներէնից Թարգմանեց

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԵԿԵՆՆ ՓՈՂՈՑ, Տ. 1/2
1889

891.5 2898

\$-65 my

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԻՊԱՇԽԱՐՀ

۶

ՊԱՏՎԵՐԱԶԱՐԴ

11002
6959

Գերմանիոլէնից Թարգմանեց

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

2007

ԹԻԹԼԻՍ
ՅՈՎԱՆՆԻՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԻԵՎՆ ՓԱԳ. 1, 2



354.

Дозволено цензурою, 10 Мая 1889 г. Тифлисъ.

„Աղբիւր“ պատկերազարդ ամսագրի հրատարակութիւն № 14.

ՈՐԻՍՏԵՄ և ԶՈՀՐԱԲ

Tipografija I. Martirosianca, na Opb. ul., d. № 1/2.

ՌՈՒՍՏԵՄ ԵՒ ԶՈՀՐԱԲ*)

1.

Թուրանն ու Իրանը՝ այս երկու սահմանակից երկիրներն արդէն վաղուց կուռում էին իրար հետ, և եթէ թուրքերն էին միշտ յաղթուած մնում, պատճառը պարսկների փահլէվան հօկայագօր ու խորամանկ Ռուստէմն էր՝ Իրանի պարծանքն և Քէյքաւուս շահի հզօր նեցուկը ուղամի դաշտում:

Բայց այժմ Սաբուլիստանի իշխան Ռուստէմ փահլէվանը սուրը պատեանն էր դրել. պատերազմը վերջացել էր, և Իրանը հանդիսատ էր վայելում բարօրութեամբ ու փառքով:

Այսպիսի խաղաղութեան միջոցին ինչ անէր Ռուստէմի նման քաջամարտիկ գինուորը:

Ռաշը՝ նրա սոս երիվարը, վրնջում էր ախոռում, իր տիրոջ պէս տանջուելով ձանձրոյթից:

Վերջապէս Ռուստէմը վճռեց որսի գնալ, որ վաղուց չէր արել, թէև արդէն մանուկ հասակից շատ սիրում էր այդ զրօսանքը: Խոկոյն կախեց նետերով լի կապարճը, փորձեց աղեղի ամուր լարը, որ միայն ինքն էր կարող քաշել, և հանեց Ռաշին ախոռից:

Ազնիւ ձին խնդութիւնից թռչկոտում ու ծառանում էր, կարծելով թէ նոր պատերազմի և յաղթութեան պիտի տանէր իր տիրոջը:

*) Ֆիրդուսի (940—1020) „Ճահնամէ“-ից ազատ փոխադրուած:

Թուստէմը ցատկեց թամբի վրայ, դարձեց իր գանգ-րահեր գլուխը դէպի Թուրանի սահմանն և չափ տալով դաշտերում, սկսաւ երէների հետք որոնել: Եւ ահա մի շամբուտ անտառի մէջ եղջերուների մի բազմաթիւ երամակ գտաւ: Ճարտար որարդը (նախ նետեր, ապա թէ փոկ ու տէզեր արձակելով), ընկաւ անասունների ետևից, և դեռ արել միջօրէին ընհասած՝ տապակեց տասն և վեց հատ եղջերու: Թուստէմի հրճուանքն ով ունէր: Նա իջաւ ձիուց, խարոյկ վառեց և ջոկեց սպանուած երէներից ամենագէրը: Չորս կտրիճ տղամարդիկ կրդժուարանային շալակել այդ կենդանուն. բայց Թուստէմը մի ձեռով միայն նրան շամփուր քաշեց և սկսաւ կրակի վրայ պըտոյտ բերել պարարտ որսը: Երբ խորովածն անոյշ բուրմունք արձակեց, հսկան նստաւ ճաշելու, կերաւ ամբողջ խորուած երէն ու ծծեց ոսկորների ուղեղը, որովհետեւ այդ էր ամենալաւ սնունդն իր յատուկ սսկորներին զօրութիւն տալու համար: Կշտանալուց յետոյ նա գնաց մօտաւոր անտառը, ուր գիտէր որ աղբեւրի ջուր կրգտնէր, և ծարաւն անցնելով պառկեցաւ մի ստերախիտ ծառի տակ, իսկ Թաշին թողեց ազատ-ազատ արածելու այն անտառում:

Մինչ Թուստէմը քուն էր վայելում օրուայ շոգին և երիվարը հանգիստ ճարակելով ման էր գալիս թաւուտներում, յանկարծ մի քանի անկոչ լրտեսներ) նրան խըրտնեցին: Գրանք մօտակայ ճանապարհով անցկացող թուրքեր էին: «Այս ինչ հրաշալի ձի է, այն էլ առանց հեծեալի», ասացին նրանք և վճռեցին բռնել Թաշին. բայց բռնելը հեշտ բան չէր... Արդէն առասանը փաթաթուել էր աղնիւ ձիու պարանոցին, բայց հէնց որ թուրքերը մօտեցան նրան, նա կծելով մէկի գլուխը փրցրեց, միւս եր-

կուսին սմբակներով տրորեց, և միայն չորրորդը, պատեհ վայրկեան գտնելով, կարողացաւ թռչել նրա մէջքի վրայ և հեծած՝ արշաւասոյր փախուստ տալ այն տեղից: Զիաւորն ինքն էլ ունէր տանը մի այդպիսի ընտիր նժոյգ: «Ի՞նչպէս լաւ զոյտ կըկազմեն», ասում էր նա, «իմ ձին և այս (գանուածը)»—չէր ասում գողացուածը: Այժմ նա այս էր մտածում, թէ ի՞նչպէս թաքցնէ իր որսը, որովհետեւ լաւ զգում էր, թէ այդ պերճ երիվարի տէրն անշուշտ ամեն հնար գործ կըդնէր իր կենդանուն գտնելու համար:)

Թուստէմ դիւցազնը քաղցր քնից զարժելուն պէս՝ սկսաւ կանչել իր Թաշին. բայց Թաշը նրան չէր լսում: Թուստէմը զարմանալով վեր կացաւ և մտաւ թաւուտի մէջ: Այն տեղ էլ քանիցս անգամ ձայն արձակեց, բայց ի զուր: Նա լաւ էր նշմարում սմբակների հետքը փափուկ փափուկ դալարում, սակայն նժոյգի նշոյլն անգամ չէր գտնում: «Այս ինչ բան է», գոչեց Թուստէմը զարյանալով. «ով է լսել, որ Թաշն իր տիրոջից փախուստ տար: Միթէ գողացմն: Ուրեմն շատերը վրան յարձակուած կըլինին, եթէ ոչ ոչ ով կըկամարձակուէր բռնել Թաշիս»: Եւ գարձեալ սկսաւ կանչել և որոնել աղնիւ ձիուն անտառի ամեն կողմերում:

Թաշը ոչ երկում էր, ոչ էլ լսվում: Ի՞նչ անէր մեր դիւցազնը. (կամայ ակամայ) ստիպուած էր ոտքով գնալ՝ խուզարկելու իր ձիուն: Եւ նա գնաց սաստիկ դրժգոհ ու գրգռուած, որովհետեւ չէր սովոր հետի ման գալ՝ այն էլ սանձն ու թամբը շալակած. (այս մի անախորժ զբօսանք էր:)

Հետեւելով երիվարի հետքերին, նա ամեն մի հարիւր քայլին կանգ էր առնում, իր շուրջը նայելով. կարծում էր թէ ձին իսկոյն իր մօտ կըվագէ: Վերջապէս արևի

մայր մտնելու միջոցին նա հասաւ Սեմէնդան քաղաքը, որի դրան մօտ Թաշլի թողած հետքերն արդէն կորչում էին:

«Պրեմն այստեղ է երիվարս», ասաց Ռուստէմը. «այստեղ՝ Իրանի և Թուրանի սահմանի վրայ: Այս երկրի տէրը մերթ սուլթանին կուսակից է, մերթ շահին. Նա կշեռքի մէտի պէս դէն է խոնարհվում: Արդեօք ո՞ր կողմնէ միտած այսօր՝ Իրանի թէ Թուրանի—ով կարող է իմանալ... Սակայն Ռուստէմի անունը հարկաւ նրան յայտնի կը լինի, և գժուար է հաւատալ, որ նա փակէ իմ առջեն դղեակի դռները: Ես կրտեսնեմ նրան և կը պահանջեմ, որ կամ յետ տայ իմ գողացուած նժոյգն և կամ գտնէ— նա չէ կարող ընդդիմանալ Ռուստէմին»:

2.

Փակէվանը հպարտ հպարտ քայլերով շիտակ մօտեցաւ քաղաքին: Այն ժամանակ պահապանները վազելով գնացին Սեմէնդանի լշխանի մօտ և ասացին. «Ռուստէմը գալիս է: Նա որս էր անում թուրքերի անտառում. այդ միջոցին նրա Թաշը փախել է, և ահա Իրանի փակէվանը մօտենում է մեր քաղաքին, (ուսին կրելով մի ծանր բեռ:) Արդեօք ինչ կը հրամայես, ով տէր (մեր): »

«Այդ ինչ հարցմունք է», գոչեց լշխանը լրաբերներն. «Իրանի զարդը շնորհ է բերում Սեմէնդանին, և դուք դեռ հարցնում է էք, թէ ինչ պիտի հրամայեմ: Դէ շնուտ արէք, թող պալատիս բոլոր մեծերը շտապեն նրան դիմաւորելու»:

Եւ ահա բազմաթիւ մեծաւորներ ու աւագներ զարդարուն շորեր հագած՝ գնացին ընդ առաջ ամենամեծ դիմացաղնին, և օրուայ վերջին նշոյներն արդէն մարելու վրայ էին, երբ երանց լշխանի ապարանքը բերին նը-

րան: Իշխանն անձամբ ողջունեց, գլուխ տուաւ նրան և ասաց. «Գալդ բարի, ով քաջ հերոս: Բայց ինչու ես մենակ: Եթէ յոդնած ես և հիւրընկալ օթեվանի ես կարօտ, ներս հրամացիր համարձակ և ասա, ինչ որ միայն փափագում ես: Ո՞վ փակէվան, հրաման տուր մեղ և վստահ եղիր, որ ինչ էլ սիրտդ կամենալ, կը կատարուի»:

Ռուստէմ փակէվանը ըրխաբուեցաւ այս խօսքերից: «Բանըս ուրեմն այսպէս է», մտածեց նա ինքն իրեն. «ուրեմն ես բարի ժամի եմ գալիս»:

Եւ ապա ձայնը բարձրացնելով! «Երիվարս թաւուսներում կորել է», ասաց նա, «և նրա հետքերը մինչև այս քաղաքն են տարածվում: Այս պատճառով, ով արքայ, պահանջում եմ, որ վերադարձնես ինձ Թաշս, և ես քեզ շատ շնորհապարտ կը լինիմ. իսկ եթէ մերժելու լինիս խնդիրս, իմ սուրը կը դտնէ նրան, (և արեան նախճիների միջով կ'անցնի Թաշը՝ ինձ Սեմէնդանից դուրս տանելիս):

Սեմէնդանի թագաւորը պատասխանեց. «Ո՞վ Իրանի լոյս, ով կարող է յանդդնիլ քո ստացուածքին դիպչելու: Թաշը երբէք չի կորչիլ—միամիտ կաց: Դեռ արեւը ըլ ծագած՝ դու կրտեսնես նժոյգիդ: Իսկ այժմ ներս հրամացիր, դու մեր հիւրն ես. Եկ մինչեւ առաւօտ զուարթ կ'եր ու խումով քէֆ անենք»:

Յոդնած որսորդին անախորժ չէր այդ հրաւէրը. Նա սիրով յանձն առաւ թագաւորի հիւրը լինել այն զիշեր և նստաւ թախտի վրայ, որի շուրջը ծառայելով կանգնած էին Սեմէնդանի ամենամեծ լշխանները: Մի բոպէում սեղանը ծածկուեցաւ ոսկեղէն ամաններով, ընտիր-ընտիր կերակուրներով, անուշահամ խմիչքներով, և սկաչեալ նաժիշտներն սկսան երգ ու պարով զուարթացնել ինչոյքը:

Ռուստէմն արիական ախորժակով փայելեց գիշերուայ

ընթրիքը, և երբ նրա դէմքի մուայլութիւնը զուարթ ժպտի տեղի տուաւ, այն ժամանակ ամենքն էլ հիանալով նկատեցին, որ փակէվանը ոչ միայն իրանի ամենաքաջ ու հուժկու մարդն էր, հապա և ամենից գեղեցիկն ու հաճելին։ Ժամերն անցան հրճուանքի ու բերկրանքի մէջ, և երբ զինու գոլորշիներից փակէվանի միտքը թմրեցաւ, նա խնդրեց որ մի սենեակ տան իրեն։ Նրան մտցրին ննջարան, և այնտեղ նա մշտաբոյր ու վարդահոտ անկողնի մէջ անոլշ քնով իր յոդնութիւնը փարատեց։

Սրդէն կէս գիշերն անցել էր, երբ Թուստէմը, պայծառ լուսից զարթնելով, տեսաւ իր առջև մի աղջիկ, որ հուրիի պէս սիրուն էր։ Դա էր Աբէմինգանի արքայադուստր Թէհմինան։ Թէհմինան կանգնած էր շքեղ զարդերով պճնուած, հետոն էլ երկու նաժիշտ՝ մի-մի լուսաւոր ջահ բռնած։ Ճողշողուն էին նրա վրայի զոհարներն ու ոսկին, սակայն չէին փալլում այնքան փայծառ, որքան իր յատուկ դէմքի ու սև աչքերի ցոլմունքը։ (Կարծես մի հաճելի գաղտնիք թրթուում լինէր նրա բուստի պէս կարմիր շրթունքի վրայ և շփոթութեան զգացմունքը վարդի գոյն տալիս իր նազելի երեսին։)

Ճուարած վեր կացաւ Թուստէմ հսկան և հիանալով այդ աննման օրիորդի տեսքի վրայ, հարցրեց նրան։

«Ո՞վ ես դու, ով նազելի։ Արդեօք մահկանացու, թէ արշալուսին փախուստ տուող ուրուական»։

Գեղեցկի թուշերն և՛ս աւելի բորբոքուեցան, և նա ասաց արծաթի պէս հնչուն ձախով։

«Թէհմինա է անունս։ Ես թագաւորի միակ աղջիկն եմ, և մինչև այս օրս չեմ զգացել որ և է իղձ, որ հայրս իսկոյն չըկատարէր։ Սակայն այս իրիկուանից ես մաշվում եմ մի տենչով, որ նրա բոլոր գանձերն անգամ չըպիտի

կարողանան յագեցնել, և փափագած է մի այնպիսի բան, որ նա անզօր է կատարել»։

Իրանի դիւցաղնը շնորհալի կուսի վայելուց խօսքերից գորոված, մի թափանցիկ հայեացք նետեց նրա աչքերին։ (Այս աչքերն երջանկութեան յոյս վառեցին նրա սրտում, և նա ասաց մեղմ ձախով։)



«Արդեօք ի՞նչ է փափագածդ, ով օրիորդ, որ զարդ ես ամեն իշխանազն օրիորդների»։

Թէհմինան չըկարողացաւ նրա հայեացքին դիմանալ և աչքերը խոնարհելով, շշնջեց։

«Թուստէմի համբաւը մի հրաշալի առասպելի պէս հասել է և իմ ականջին։ Ես էլ եմ լսել, թէ որքան նա

արդարամիտ է, ազնիւ ու քաջ: Այդ միակ մարդու ձեռքովն է, ասում են ինձ, որ պաշտպանվում է իրանը, (այդ միակ մարդու, որ մենակ անց է կենում Թուրանի միջով և վստահ է,) որ իր մի հատիկ նիզակն ամբողջ զօրքի բան կ'անէ: — Հենց այս օրից որ լսեցի այդ հոչակը, իմ միակ բարդանքն էր աչքովս տեսնել Ռուստէմին, (տեսնել նրա անվկանդ մարմինը, նրա սոսկալի պատկերը:) Կարօտից գիշեր ցերեկ մաշուելով, երազումս անդամ պտրում էի միայն իրանի հոկալին: Եւ ահա, Ռուստէմ, դու եկար, (և ես թաքուն նշմարեցի քեզ հօրս խնջուքի միջոցին. բայց զարմանք չէ, որ քեզ տեսնելիս ոչ մի սարսափ չը զգացի, այլ վշտախառն երջանկութիւն տիրեց սրտիս:) Ես արտասուք թափելով գնացի հօրս մօտ և ուզում էի մի բան խնդրել նրանից, բայց թէ ինչ—ես ինքս էլ չըգիտէի: Ան ժամանակ հայրս ասաց, թէ միայն դու ես կարող որտիս տեսնչն իմանալ և յայտնել ինձ, միայն թէ կամենալիր:

Օրիորդը լրեց: Քաջն արագ իջաւ թախտից, բռնեց նրա ձեռն և ոգեսրուած բացագանձեց.

«Թէհմինա, դու կամենում ես, որ ես քեզ կին առնեմ, և հօրդ խորհրդով եկել ես նուաճելու աննուաճիս»:

Սեաչեալ աղջիկը, եղեմական փէրի նման գեղեցիկ, ժպտաց միայն և Ռուստէմը, նրա ժպիտը տեսնելով, իսկուն իմացաւ, որ օրիորդը «ոչ» ասելու չէր, (և առանց սպասելու իշխանուհու պատախանին՝ բռնած ձեռը համբուրեց:)

Վերջապէս աչքերը մի կողմ դարձնելով, նա տեսաւ թագաւորին, որ ծածուկ հետևել էր իր աղջկան, և այժմ ուրախ-ուրախ զալիս էր նշանելու նրան Ռուստէմի հետ: Գիշերալին լուսթեան մէջ յանկարծակի ձայն հնչեց,

թէ Ռուստէմը նշանուել է թագաւորի դստեր հետ, և խընդամիտ ժողովուրդը մինչեւ լոյս կանգնած կացաւ պալատի շուրջը, բերկրալից ողջոյն տալով հարսին ու փեսալին:

Սակայն վրայ հասնող առաւօտը հրաժեշտի դառն ժամը մօտեցնում էր: Ռուստէմը պարտական էր իրան վերագառնալ և ծածուկ պահել, թէ կին էր առել թշնամինելի աշխարհից *:

Եթե նա գուրս պրծաւ թէհմինալի զրկից և սիրուն արքայադուստրը լալով ընկաւ բազմոցի վրայ, Ռուստէմը հանեց իր բագկից մի ոսկէ ապարանջան և ասաց.

«Յիթելիս, առ այս զարդը, և երբ Աստւած մեզ մի զաւակ պարզեւէ, նրան կընծայես: Եթէ աշխարհ գալուն աղջիկ լինի, նրա խոպավիքն այս ոսկէ շըջանակով կըրութիւնու: Խոկ եթէ արայ լինի, թող նա կը բաղկի վրայ, ինչպէս որ կրում էր իր Ռուստէմ հայրը: Այս ապարանջանով զարդարուած կ'ուզարկես նրան մեր աշխարհը, և այդ նշանից կ'իմանամ ես, թէ ինչ տոհմի ու զարմի շառաւիդ է մեր մանուկը»:

Այդ միջոցին ներս մտաւ թագաւորն և աւետեց Ռուստէմին, թէ Ռաշն արդէն գտնուել է: Զին ինքն իրեն

* Բանսատեղծը չէ յայտնում, թէ ինչու երկու հարևան երկիրները, ընաւելով որ արդէն հաշտուած էին, դարձեալ միմեանց թշնամի էին համարում: Պարսիկները բռնի Խոլամ ընդունեցին. նոր փարփակեսութեան առջև խոնարհելու անյօժար գլուխները կրութեցան, և մարգարէի քարոզած կրօնը սրի զօրութեամբ յաղթանակեց իրանում: Սակայն արդէն մեր Ը. դարում Թուրանն այդ կրօնի պատճառով բաժանուեցաւ իրանից, և երկուստեք բորբոքուած մոլեգին ֆանատիկոսութեան հետեւանքն այն եղաւ, որ երկու երկրի բնակիչները սկսան խորշիլ իրարուց, զգուշանալ խնամութիւնից, և արտունջ յայտնել, եթէ մի ազգի մարդ միւս ազգից կին ուզէր: — Թուրքերը սիւննիներ են, աչ մինքն օրինականներ, որոնք Մահմեդի օրինաւոր յաջորդներ են մամարում առաջին երեք խալիֆաներին՝ Աբուբեքրին, Օմարին համարում

եկած է եղել զդեակի դրան առջևու ու վլնջելով իմաց տը-
մել, որ ներս թողնեն: Դիւցազն ուրախ սրտով դուրս վա-
զեց սիրած նժոյգին տեսնելու, շոյեց ու թամբեց նրան.
յետոյ ջերմ համբուրեց Թէհմինալին և հրաժեշտի վերջին
ողջոյն տալով նրան, ձին հեծաւ ու խրոխտ գլուխը վեր-
ցրած՝ զւարթ մեկնեցաւ պալատից:

Այս տարօրինակ արկածի վրայ մտածելով, Թուստէմն
առաւոտեան հողմի նման արագ սլացաւ դէպի Սիստան՝
իր հայրենի աշխարհը, և շատ չափած տուն հասաւ: Եւ
հասնելուն պէս՝ մի ոստիւնով իջաւ թամբից, կարծես մի
ուրախ որսից գալիս լինէր:

3.

Մենակ մնաց Թէհմինան, լաց լինելով բացակայ մար-
դու ետեից: Միայն այն ժամանակ դադարեց նա դառն
արտասուք թափելուց, երբ մայր դարձաւ մի տղախ, որին
և աչքի լոյսի պէս սիրեց: Չնաշխարհիկ մանուկն ամեն
մի գծով նմանում էր Թուստէմ հսկային, և մայրը Զոհ-
րաբ անուանեց նրան:

Զոհրաբը դեռ մի տարուայ հասակ չունէր, և նրան
երկու տարեկան էին համարում: Երեքամեայ որ եղաւ,

և Օթմանին. մինչ դեռ պարսկիները շիրներ են, որոնք Մահ-
մեդի փեսայ Ալիին են նրա օրինաւոր յաջորդը համարում, մեր-
ժելով առաջին երեք խալիֆաներին: Սլւնինիների կարծիքով՝
շիրների աղանդը Մահմեդի «զուտ» վարդապետութեան ուրա-
ցումն է: Հաւանական է, որ այս կրօնական խտրութիւններն ա-
ռիթ տուած լինին երկու ազգի այն թշնամութեան, որ նշմար-
վում է ներկայ վէպում, և թերևս այդ լինի պատճառ, թէ ինչու
փակէվանը ընհամարձակուեցաւ հայրենիք տանել իր նորատի ա-
մուսնուն: Սակայն դրանով դեռ չէ կարելի բացատրել, թէ ինչու
Թուստէմը գոնէ յետոյ մի փորձ չարաւ կրկին տեսնելու իր կնոջն
և որդեկին:

արդէն ձի էր վազեցնում, իսկ հինգ տարեկան դառնա-
լուն պէս՝ առիւծի ու վազրի վրայ էր որսի գնում: Եթէ
որ հսկայազօր մանուկը տասներորդ տարին էլ բոլորեց, էլ
ոսով չըկար, որ նրան հաւասար հանդիսանար բռնամար-
տում կամ արշաւում: Զօրութեամբ ու քաջութեամբ նա
կարծես մի առիւծ լինէր. իսկ բարեմոյն ու հեղ բարքով
և ճակատի վրայ ծածանուղ մետաքսափայլ հերքերով
լիովին նման էր իր հօրը:

Մի առաւոտ մանուկը, խրոխտ կանգնելով մօր առ-
ջեւ, այսպիսի մի հարցմունք արաւ.

«Ասա ինձ, մայրիկ, թէ ես որի՞ շառաւիդն եմ: Ըն-
կերներիս մէջ մէկն էլ իմ չափ քաջութիւն և ոյժ չունի,
բայց էլի նրանք ծաղրելով են հօրս անունը հարցնում:
Ասա ինձ, ովք է հայրս, և լսելի արա մի անուն, որից տե-
ղի չունենար ամացնու արքայազնը, ապա թէ ոչ՝ ես
ինքս ինձ աչքիդ առջև կըսպանեմ»:

Եւ պատանին, ցոյց տալու համար թէ ասածը կա-
տակ չէ, իր կուրծքին դրաւ դաշոյնի ծալը:

Թնդաց Թէհմինալի զգայուն սիրու նայրենի քաղցլ
խնդութեամբ: Նա տեսաւ, որ հսկայորդին արդէն դուրս է
պրծնում իր ձեռքից, թէ նրա երակներում եռ էր գա-
լիս հօր արիւնը,—և լաւ համարեց այլ ևս չըթաքցնել
նրա ծննդեան գաղտնիքը:

«Իմացիր, Զոհրաբ, որ դու պարսից Թուստէմ դիւ-
ցազնի որդին ես: Հայրդ իրանի և Թուրանի ամենա-
քաջ զինուորն է, և դու պատճառ չունիս ամաչելու ոչ
ոքից: Ահա տես, այս ոսկէ ապարանջանը նա քեզ տա-
լու համար ինձ յանձնեց: Լաւ պահիր սրան, որովհետեւ
այս նշանով պիտի ճանաչէ նա քեզ մի օր: Զգուշացիր,
որդեակ, որ խած խօսքերդ Աքլասիաբ սուլթանի ականջը

ըլնկնին: Թուրանի սուլթանը ոչ ոքի գէմ այնպիսի ոխերիմ թշնամութեամբ չէ վառուած, ինչպէս որ Թուստէմի գէմ, և նա, հօրդ տաելով, անշուշտ քեզ էլ կուգենայ ոչնչացնել: Հայրդ արդէն կորածի պէս է ինձ համար. լաւ է մեռնեմ, քան թէ քեզնից էլ զրկուիմ»:

Սակայն Զոհրաբն ազնիւ հպարտութեամբ պատասխանեց.

«Լաւ չէ, որ աչքերս բոլորովին խաւարին, քան թէ սրտում ծածկած պահեմ քաջ Թուստէմի անունը... Ես ծագում եմ աշխարհիս ամենաքաջ դիւցազնից, և դու ասում ես, որ չըպարծենամ նրանով: Պայլիկ, ինչո՞ւ էիր այսքան ժամանակ թաքցնում ինձնից այս մեծ բախտը: Գինուոր չըկայ, որ Թուստէմի անունը չըտայ վստահութեան կամ երկիրդի ժամանակ, և միայն ես չարտասանեմ նրա անունը... (Այս բերդն ով առաւ, ով կործանեց այս հրէշին, ով ջախջախեց այս վիթիարի թշնամուն, հարցնում է ամեն մարդ, և յսում է— Ու ուստէմ լ:) Ես միշտ հիացմամբ և թաքուն նախանձով եմ ականջ դրել նրա գովքին, առանց "իմանալու, թէ նա իմ հայրն է, թէ Թուստէմ բառը հօրս անունն է: Եւ այժմ, որ արդէն զիտեմ թէ նա հայրս է, լռեմ, ծածկեմ նրա որդին լինելու: Ոչ, ես իսկոյն կ'երթամ որոնելու փառաւոր ու պանձալի հօրս: Սեմէնգանից և Թուրանից կ'ընտրեմ ինձ համար մի ջոկ գունդ և կ'արշաւեմ դէպի իրան: Ես գահից վայր կըդրեմ Փէլքաւուսին և նրա փոխարէն կընտեցնեմ Թուստէմին, որովհետև հօրս է միայն պատկանում իրանի արքայական ալթուը»:

Քաջագործութեան ամենի եռանդն արդէն վառել էր տասն և երկու տարեկան համբակի սրտում: Այս անհնարին էր բռնել նրան: Ոչ մօր արտասուքը,

աղաչանքը, ոչ էլ պապի սաստերը կարող եղան շրջել նրան մտքում դրած խորհրդից, և վերջապէս երկուսն էլ տեղի տուին, որ երթաց:

Թերունի թագաւորը բաց արաւ իր զինանոցն ու գանձարանը, և ամեն կերպ հոգ տարաւ, որ իր թոռն ու նրա ընտիր գորագունդը լաւից լաւ սպառագինուին:

Զոհրաբը միայն մի երիվար էր պահանջել, և նրա համար քսան պատուական նժոյդ բերին: Հսկայորդին աջը դրաւ առաջին իսկ յովտակի վրայ, և ձին չոքեց, չը կարողանալով դիմանալ նրա ձեռի ծանրութեան: Այսպէս՝ քսան ձիուց և ոչ մէկը յարմար չեկաւ դիւցազնին—բոլորն էլ շատ թոյլ էին նրա համար: Վերջ ի վերջոյ յառաջ եկաւ մի ծեր զինուոր և ասաց.

«Ես ունիմ ախոռումս մի նժոյդ, որի նմանը գեռերէք չէ տեսնուած Սեմէնգանում. Նա ծագում է Թաշ ձիուց և իմ ազնիւ արաբական զամբիկից: Փղի նման ուժով է նա և այծեամի պէս սրբնթաց. Նրա արշաւիլն որ տեսնես, կ'ասես փոթորկալի ամպի ստուեր է, որ սահում է փափուկ գետնի երեսով: Բայց մի վատ բան ունի այդ նժոյդը. Թոյլ չէ տալիս, որ վրան հեծնեն»:

«Աստեղ բեր նրան», հրամանեց Զոհրաբը, և երբ բերին,—բռնեց ազնիւ ձիու թաւ բաշից և մի ակնթարթում վրան ցատկեց: Սիրուն պատանին նժոյդի վրայ արձանի պէս ամուր նստած՝ տաս թէ իսաղալով էր բրոնում սանձը: Բոլորեքեան շուարած մնացին, երբ տեսան, որ աննուած երիվարը գառնուկի պէս հնագանդ էր, և ցնծութեան աղաղակ էր, որ լսելի եղաւ Զոհրաբի սպառագինած կտրիճների բանակում:

Իրանի գահը տապալելու պատրաստուած Զոհրաբի հանուական որ լսեց Թուրանի Աֆրասիաբ սուլթանը, իսկոյն սկզբանին որ լսեց Թուրանի Աֆրասիաբ սուլթանը, իսկոյն սկզ-

27 / 1922
Ա. ԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՅԻ



սաւ մտքումը կշռել, թէ արդեօք ինչ օգուտ կարող է քաղել այդ հրաշալի պատանուց: Անյայտ չէր նրան Թէհմինալի ծածուկ ամուսնութիւնը Ռուստէմի հետ, և նա զիտէր, որ Ռաշի մտրուկի վրայ հեծնող քաջը Ռուստէմի հարազատ որդին է, որ այժմ զնում է իր հօր մօտ: Թուրքերի խորամանկ սուլթանը վերջապէս որոշեց իր անելիքն և կանչել տուաւ Բարմանին, որ իր հաւատարիմ փաշան էր:

«Թէ շուտ արա, ով իմ փորձուած զօրական», ասաց նա մտերմին, «առ հետրդ մեր ընտիր զինուորներից տասն և երկու հազար ձիաւոր և գնա Սեմէնգան: Այնտեղ Ռուստէմի որդին Զոհրաբը պատրաստվում է իրանի վրայ արշաւել: Ասա նրան, թէ Աֆրասիաբ սուլթանն օդնական զօրք է ուղարկում նրան՝ պարսիկներին նուաճելու համար: Դու միշտ անրաժան եղիր նրանից և երբ որ իրան մըտնէք, աշխատիր, որ Զոհրաբը ըրկարողանայ իր հօր հետ ծանօթանալ: Անհրաժեշտ է որ նրանք թշնամաբար բախուին միմեանց, որովհետև, եթէ կայ մի մահկանացու, որ կարող լինէր ծեր Ռուստէմին խորտակել, այդ նրա մանուկ որդին է: Ռուստէմի որդին միայն ձեռնահաս է յաղթել այդ ամենազօր հսկալին: Չեմ հարցնում, թէ ով որին կըջարդէ. երկուսն էլ ինձ ատելի են: Ուրեմն փութանք. թող ընդհարուին իրար հետ. մեզ օգուտ է, որ նրանք միմեանց կոտորեն»:

Բարմանը խոր գլուխ տուաւ և ասաց.

«Ո՞վ իմաստութեան լոյս, թող հրամանդ կատարուի»: Ապա թէ ձին հեծաւ և ամենայն ճշգութեամբ տիրոջ պատուէրը զլուխ հանեց: Տասնևերկու հազար թուրք ձիաւորները միացան Սեմէնգանի զօրքի հետ, և այս բոլոր հեծելազօր այլուձին որոտագոչ փոթորկի նման իրանի

սահմանից ներս խուժեց, ամեն տեղ աւերմունք, հալածանք և ասպատակ սփուելով:

Իրանի ամուր բերդը գտանվում էր մի նեղ կիրճում, որ՝ այսպէս ասած՝ դէպի երկրի սիրտը տանող մի գուռն էր: Քէյքաւու շահի ապաւէնն ու պարծանքն էր սեպ ժայռերի վրայ բարձրացող այդ «Սպիտակ բերդը»: Դրա պահապաններն էին երիտասարդ Հաջիրն ու ծերունի Գեղդէհէմը. մէկն անուանի իբրև իմաստուն խորհրդական, միւսն իբրև քաջ զօրական: Հաջիրը շատ էր սիրում Գեղդէհէմի Գուրդափէրիդ աղջկան, և թէպէտ գեղեցկուհին համալրութեան որ և է նշան չէր ցոյց տալիս, բայց և այնպէս սիրահարը յուսով էր, թէ առաջին իսկ քաջութեան գործից յետոյ կըստանայ օրիորդից ակրնկալած քաղցր վարձը: Ուստի թուրքերի նախարշաւ յարձակումը մեծ խնդութիւն պատճառեց նրան. նա վստահ էր երկու յաղթանակ տանելու, երբ կուուելու տենչով վառուած սպառագէն գուրս էր գալիս բերդի գունից և մենամարտի հրաւէր կարդում թշնամիների սպարապետին: Աղջիկն աչքով հետեւում էր նրա դիմագրաւ ընթացքին բերդի բարձր աշտարակից:

Զոհրաբը՝ այդ խրոխտ հրաւէրն ընդունելով, յառաջ խաղաց, և երկուսի մենամարտը բորբոքուեցաւ: Հաջիրը բոլոր ուժով հարուած ուղղեց նրա կուրծքի դէմ. սակայն Զոհրաբը շանթի արագութեամբ մի կողմ թռաւ, յետոյ ուժգին յարձակուեցաւ ոսոխի վրայ և թաւալագլոր գետին նետեց նրան թամբից: Այնուհետև ինքն էլ ձիուց վայր իջաւ և ծունկը բերդապահի լանջին դրած՝ սուրբ հանեց և ուզում էր զգից բաժնել նրա գլուխը:

Պարսիկը դժուարութեամբ զլուխը վեցցեց և ասաց. «Էրիք է, որ դու ինձ բերդի առջև փոշու մէջ թաւա-

լեցիր և ինձ այսքան ամօթ հասցըիր: Գթա կեանքիս,
և ես քեզ երախտապարտ կըմնամ»:

Պատանին մտածելով, թէ Հաջիրը կ'օդնէ նրան
անձկալի հօրը գտնելու, վեհանձնաբար այդ խնդիրը կա-
տարեց: Եղիտասարդ բերդապահը, ձեռքն ու ոտքը շըդ-
թայած, թուրքերի բանակը տարուեցաւ: Բանակում մեծ
ու փոքր միաբան գովասանքով հռչակեցին հզօր Զոհրաբի
այս առաջին յաղթանակը:

4.

Մինչ թուրքերի բանակում ցնծութեան ազաղակ
էր բարձրանում, Սպիտակ բերդի մարդիկը սուզի մէջ էին
ընկղմած: Գուրդափէրիդը տիրագէմ վայր էր իջել աշտա-
րակից: Իրաւ է՝ նա սովոր էր զրդուել Հաջիրին իր արտա-
քին սառնութեամբ, բայց նրա գլուրուխը որ տեսաւ, իս-
կոյն զգաց, որ կարծածից աւելի էր սիրում նրան: «Ար-
դեօք ովէ նրան տապալող համբակը», մտածեց նա: «Մի-
թէ չէ կարելի պատժել մի կերպ այդ պատանուն. չէ որ
կարացի խորամանկութիւնը ստէպ յաղթել է և նրանից
քաջ կտրիճներին»:

Այլէս խօսելով Գուրդափէրիդը զրահներ հագաւ, գլու-
խին դրաւ մի սազաւարտ և ձի հեծած՝ գուրս թուաւ բեր-
դի դռնից, որ գունապանը սիրով բաց էր արել նրա առ-
ջւե: Բազէի պէս սլացաւ նա դէպի թուրքերի բանակն և
բարձրաձայն ազաղակեց.

«Ո՞վ էր, որ գետին գլորեց իմ պատուական ընկերին:
Եթէ չէ նա մի վատարի, թող գուրս գալ, որ տէզով
շամփրեմ նրա սիրտը»:

Ջատերը, յանդուդն հրաւէրը լսելով, դուրս ելան մե-



նամարտի, բայց Զոհրաբն ամենից շուտ առաջ անցաւ:

Թուղաֆէրիդն իր թեթև ձիու վրայից արագ մի նետ արձակեց և ուզում էր գրգռել իր պատանի դիմամարտին: Նա մերթ սոսիսի լանջքի դէմ էր ոլաք նետում, մերթ մէջքի, բայց նրանք վետրի պէս թօթափկում էին Զոհրաբի ամրակուռ զրահներից: Սակայն ճարպիկ օրիորդն իր այս վարպետ զինախաղով փոքր առ փոքր որսաց նրան մինչև բերդի պարիսպը:

«Կաց և վայր դիր նիզակդ», գոչեց Զոհրաբը, «Ես արդէն ձանձրացայ այս մանկական դատարկ խաղից»:

Թուղաֆէրիդը բռնեց ձիուն, շուռ եկաւ դէպի սոսիսը, բայց փոխանակ նիզակը դէն ձգելու՝ հանեց գլխի սաղաւարտը. և նրա գեղածուփ վարսերն ուսերի վրայ փռուեցան:

«Ուրեմն իմ սոսիսը մի կի՞ն է», գոռաց շուարած Զոհրաբը. «Ես կանանց հետ մարտնչելու չեմ եկած. ձեզ կարելի է և առանց զէնքի նուաճել»:

Նոյն վայրկենին նա քակեց թամբից առասանն և արձակեց. լարը թուաւ և ամուր փաթաթուեցաւ օրիորդի իրանին: Օրիորդը բռնուած էր. բայց իսկոյն ուշքի եկաւ իր առաջին սարսափից, հանեց գոտուց դաշոյնը, լարը կտրեց և հողմի պէս ոլանալով դէպի դուռը, որ հոգատար բարապանը բաց էր պահել, ներս վազեց, մինչ դռները հետամուտ Զոհրաբի հէնց քթի տակ վակուեցան:

Եթէ Ռուստէմը լինէր նրա տեղը, անշուշտ կըծիծագեր այս փոքրիկ արկածի վրայ. բայց Զոհրաբին սաստիկ զալուց պատճուից օրիորդի նենդութիւնը:

«Ո՞վ ընկերներ», գոչեց նա, դէպի բանակը ճեպելով, «Սպիտակ բերդը լանդգնում է դիմադրել մեզ: Ուրեմն եկէք իսրտակենք դրան և կրակ տանք աշտարակը. թողքար քարի վրայ ըըմնար»:

Այդ միջոցին նրան մօտեցաւ Աֆրասիաբ սուլթանի մտերիմ բարման վաշան և հանդարտ ձայնով առաց նըռան. «Այդպէս մի անիր, ով իմ Զոհրաբ: Այդ պարսիկների վրայ առանց պատրաստութեան յարձակուիլն անմտութիւն կըլինէր: Ամենից առաջ հարկաւոր է մի քանի սանդուղքը շինել տալ. եթէ ոչ երբէք չենք յաջողիլ բարձրանալ այդ ժայռի վրայ, որի գագաթից իրոխտ ամրոցն ասես թէ մեզ ծաղրում է»:

«Թրա դէմ ասելու բան չունիմ», պատասխանեց Զոհրաբը. «Ուրեմն շինել տուր սանդուղքները, և թող մինչև արշալոյսը պատրաստ լինին: Իմացած եղիր, որ Ես պիտի բարձրանամ ամենից առաջ»:

Պատանին այս խօսքերն ասելով, մէջքը դարձեց և գնաց մտաւ իր վրանը: Մինչ բարմանը գերաններ էր կտրել տալիս սանդուղքներ շինելու համար, բերդի մէջ մի մարդ չըկար այն գիշեր, որ արթուն ըըլինէր:

Ակոր Գեղգէհէմը մտամոլոր նստած էր և դողդուն մատներով նամակ էր գրում իր շահին: (Սովորութեան համեմատ՝ թղթի սկզբում Գէլքաւուի գահի համար Աստուծոյ օրհնութիւնն ու շնորհը մաղթելուց յետով,) նա նկարագրում էր Սպիտակ բերդի պաշարուելը տաճիկների անթիւ զօրքից և աղէտալի վիճակը. պատմում էր, թէ բնչպէս նրանց զօրավարը, որ թէկ գեռ մանուկ է, մի յարձակմամբ թամբից թուցրեց և գերի վարեց Հայիրին:

«Այդ մանկան դէմ կարելի է միացն մի ախոյեան գուրս հանել, և յատկապէս Ռուստէմին», գրեց Գեղգէհէմը: «Ուստի, ով տէր, թող շուտ գայ այստեղ փահէկ վանն և աղատէ բերդը թշնամու ձեռքից: Ես ինքս այս զառամած հասակումն, որ քեզ էլ լաւ յալտնի է, չեմ կա-

Պող բերդը պաշտպանել, և այս գիշեր իսկ փոքրիկ վաշտովս մեկնելու եմ դղեակից»:

Գրեց և յանձնեց նամակը մի սրբնթաց սուրհանդակի, որ և ճեպով ճանապարհ ընկաւ: Այնուհետև ծերունին ժողովեց իր ծառաներին, սակաւաթիւ զինուորներին և նըրանց ու Գուրդաֆէրիդի հետ միասին մի գետնափոր ճանապարհով անհետացաւ ամրոցից:

Զարմացան տաճիկները, երբ առաւօտեան բուրդի վըրայ յարձակուելիս՝ մէջը բնաւ մարդ չըգտան:

Զոհրաբը կամենում էր իսկոյն երկրի ներսն արշաւել. բայց Բարմանը խորհուրդ տուաւ, որ նախ բերդն ամրացնէ և ախտեղ գտանուած պարէնով իր զօրքը լաւ կշտացնէ: Այսպէս ահա տաճիկները մի քանի օր Սպիտակ բերդում մնացին, և Բարմանը նստաւ զեկուցումն գրելու եր արքային այս առաջին յաղթութեան վրայ:

5.

(Գեղէհէմի) սուրհանդակը գտաւ Իրանի տիրապետին Խստահարում, ուր շահն այդ միջոցին նստած էր իր բազմաթիւ դրանիկներով: Մրտմտութեան մռալլ ամպեր պատեցին Քէյքաւուսի ճակատը, և նա իսկոյն մի մեծ ժողով գումարեց:

(Խորհրդի եկան շահի Փերաբորս, Գուրդին, Քէշմադ և Թօհամ որդիներն և պէտութեան Թուս սպարապետը: Իրանց միացան Գուրազ, Գև, Միլադ, Փէրհադ և Բահրամ զօրավարները: Վերջապէս եկաւ և ութսուն զաւակի հայր Գուրդէրս անունով արծաթահեր ծերունին: Գերուած չաշիր բերդապահը մէկն էր այդ որդիներից. ուստի ծերը տրտում-տրտում զլուխը կախեց, երբ որ որդու թշուառութեան բօթն առաւ:

Ճահը ծեռին բռնած ունէր Գեղդէհէմի նամակը:

«Միթէ Ռուստէմից զատ ոչ ոք չըկայ, որ դուրս գայ այդ անմօրուս համբակի դէմ», ասաց նա: «Ի՞նչ խորհուրդ կըտաք ինձ, ով հաւատարիմ ծառաներ, որ ինքերդ էլ լաւ էք ճանաչում Ռուստէմին»:

«Բոլորս էլ կըցանկանանք, որ նա գայ և Սպիտակ բերդն ազատէ», լսելի եղաւ ամեն կողմից:

«Բարին է», ասաց շահը: «Ես ալստեղ կրկանչեմ փահլէվանին, և դու, Գև, որ նրա փեսան ես, իմ դէսպանը կըլինիս»:

«Ով Ռուստէմ, որ Սարուլիստանի իշխանն ես և Իրանի ապաւէնը», գրում էր շահը, «Թուրանի կողմից մի վտանգ է սպառնում մեղ: Սեմէնգանի արքայական զարմից սերուած Զոհրաբ անունով մի պատանի, որ առիւծի պէս խիզախ է, փղը նման զօրաւոր ու փալակի չափ սրբնթաց, Սպիտակ բերդը նուաճել է: Բացի Ռուստէմից ոչ մի մահկանացու չէ կարող մօտալուտ չարիքի առաջն առնել: Ուստի այս տողերը կարգաս թէ չէ՝ երկրիս սահմանը կըչուես: (Եթէ գիրս ստքի վրայ ստանալու լինիս, էլ չես նստիլ, այլ նոյն ըոպէին ձիգ կըհեծնես. եթէ ձեռումդ բաժակ լինի այդ միջոցին, էլ չես պարպիլ, ոչ մի վայրկեան չես կորցնիլ, այլ կըփութաս, որովհետև այդ է պահանջում մեր Իրանի փրկութիւնը»:

Ռուստէմ դիւցազն անչափ ուրախացաւ իր փեսայի հապճեպ գալուստը տեսնելով. բայց Գևը մինչև անգամ ողջունի ժամանակ չըտուաւ նրան, այլ միայն աչքով արաւ, որ շուտ կարդայ նամակը:

Ռուստէմը նամակի կնիքը կոտրեց և կարդաց: Յետոյ ձեռն աչքին տարաւ և մի քանի բոպէ լուռ մնաց, մտածելով ու խորհելով:

«Զոհը է կոչվում այդ պատանի դիւցազնը, և Սեմէնգանի արքայական տոհմիցն է», մտածում էր փակէլէվանը, և վաղուց տահած երջանկութեան ժամերն այնպիսի թարմ գոյներով պատկերացան նրա հոգում, որ կարծես թէ երկար ու ձիգ տարիներն անջրպետ դրած չըլինէին անցեալի ու ներկայի մէջ...

«Հաղիւ թէ տասն տարի անցած լինի այն օրից մինչև այժմ», ասաց նա կամացուկ և ինքն իրան. «Անհնարին է ուրեմն, որ որդիս լինի այդ Զոհրաբը... Եթէ Աստուած ինձ մի որդի էլ տուած լինի Սեմէնգանում, դարձեալ պէտք կըլինի մի տասն տարի սպասել, մինչև որ Թէհմինան նրան ինձ մօտ ուղարկէ՝ ոսկի նշանը բազկին: Եւ նա անշուշտ մտերմաբար ու սիրով կ'արձակէ ինձ մօտ պատանուն, իբրև մի ցանկալի հիւր, և ոչ թէ սուրը ձեռին, որպէս մի քաղաքաւեր թշնամի: Ո՛հ, երանի թէ Թէհմինան ինձ մի որդի շնորհած լինի, որովհետև իրանում ես չունիմ և ոչ մի դաւակ, որին մի օր Սաբուխստանին տէր կարգէի»:

Գեր, իր աների այս վշտագին հառաջանքից ապշելով, մօտեցաւ նրան համեստաբար և ասաց. «Արդեօք չես հրամայիլ թամբել Թաշին»:

«Ո՛չ, Գև. այդքան շտապելու բան չըկայ. այսօր դու իմ հիւրն ես, ներս մտիր: Միթէ շահի մի խօսքի համար իսկոյն կոյր եռանդով բորբոքուիմ... իսկոյն թողնեմ բան ու գործս և ազնիւ Թաշիս չարչարեմ, որովհետև անշնորհ Գեղգէհէմը Սպիտակ բերդից հալածուել է մի ստընդի տըղայի ձեռքով... Զէ, իմ ծերունի Քէչքավուս. կըսպասես փոքր ինչ, կըհամբերես, ով մեծազօր իմ արքայ»: Եւ նա ծիծաղելով ներս տարաւ իր փեսային, որին և հարկեց մի փառաւոր ընթրիքով:

Բայց և այնպէս Գևը չիմացաւ Թուստէմի ծանր շարժելուն բուն պատճառը: Պատերազմ գնալու չկամութիւնը չէր, որ բոնում էր միշտ ուազմասէր դիւցազնին, այլ այն ծանրաթախիծ տրտութիւնը, որ զգում էր Զոհրաբի վըրայ մտածելիս: Տասն անգամ նա հեգնութեամբ հեռու քշեց իր գլխից և տասն անգամ վերակրկնեց այս միտքը, թէ «Հապա եթէ որդիս լինի այդ Զոհրաբը...»

Եւ ահա այդ տագնապիչ վարանումն էր, որ ջլատում էր փակէվանի հզօր կամքն և արգելում նրան մի վճռական քալ անել:

6.

Գիշերուայ ստուերների հետ Թուստէմի տագնապն էլ փարատուեցաւ, և առաւտուեան նա գէնքերը հագնելով չու ընկաւ իր գնդի հետ միասին: Քէչքավուս շահն ուրախութեամբ ողջունեց փակէվանին, և յաջորդ արշալուսին, երբ արտուտիկն երգում էր, նրա զուարթ դայլայիկը զէնքերի շառաչիւնով ծածկուեցաւ: Թմբուկներն որոտացին. զօրքը վաշտ-վաշտ սկսաւ անցնել շահի առջեկց, և իրանի տիրապետը խնդութեամբ ողջունում էր քաջամարտիկ զինուորներին. սակայն դրանք բոլորն էլ միասին առնուած այնքան բերկրանք չէին ազդում նրա սրտին, որքան մի մարդ, որ արդէն մենակ մի ամբողջ զօրք կ'արժէր: «Թուստէմ փակէվանն է մեր սպարապետը», լսելի եղաւ բանակում, և նրա լոկ անունը յաղթանակի վստահութիւն տուաւ սրտերին:

(Սրեփ ճառագայթները հազարաւոր նշոյլներով շողշողում էին շքեղ զբանների ու վահանների վրայ, փոթորկից տարուբերուող ծառերի նման տատանվում էին սաղաւարտները. արտերի երեսին ծածանուող հասկերի պէս խիտ առ խիտ ճօճկում էին նիզակներն ու տէգերը: Զօրքն

այսպէս յառաջ գնալով հասաւ մինչեւ Սպիտակ բերդն և
բանակ դրաւ նրա առջև:

Անասելի ուրախութիւն զգաց Զոհրաբը, երբ յառա-
ջապահ զինուորները լուր բերին, թէ թշնամին գալիս է:
Զէ որ նա արդէն վաղուց սպառագինուած և պատնէշ պա-
տած սպասում էր այդ տենչալի բոպէին: Նա, Բարձանին
կանչելով, իսկոյն ելաւ մի աշտարակ, որի վրայից կարելի
էր բոլոր դաշտը լաւ տեսնել: Հպարտ-հպարտ ցոյց տուաւ
նա ալէկոծուող դրօշակներն ու տէգերը և յառաջ քա-
շելով երկչու տաճկին, բացագանչեց. «Տես, թէ որքան
զօրք է եկել ինձ պատիւ բերելու համար: Քէլքաւուս շա-
հը կարծեմ էլ մարդ չ: Թողել, որ ընհաւաքէր իրան
սպառնացող պատանու դէմ. ահա նա գալիս է իր բոլոր
դիւցազներով, որոնց քաջութեան գործերը փառաբանուած
են երգերում: Ո՞հ, ասա ինձ, Բարձան, չես նշմարում այն
մէկին, որի անունը պայծառ լուսով փայլ է տալիս ա-
մենքին: Ասա ինձ, ով է առաջինը, ամենաքաջը բոլոր
պարսիկ դիւցազներից»:

Սակայն Բարձանը, իր տիրոջ պատուէրը լիշելով, ը-
կամեցաւ տալ Ռուստէմի անունը, թէև շատ լաւ ճանա-
չում էր:

«Մէկը չէ՝ շատերը կան պարսից բանակում, որոնց
յաղթելը պարծանք կըրերէր քո անուան, ով իմ Զոհրաբ»,
ասաց նենգամիտ տաճկիը. «Եւ եթէ կամենում ես փառք
վաստակել, գնա մենամարտի հրաւէր կարդա այն մէկին,
որ ամբողջ զիսով բարձրանում է ամբոխից: Խորտակիք
նրան առանց երկար իսօնելու: Մի ասիր նրան, թէ ով ես
դու, մի էլ հարցնիր իր անունը, մինչեւ որ արիւնաներկ
սրիցդ ստիպուած՝ նա ինքն չասէ այդ անունը: Այս է
դիւցազների սովորութիւնը»:

Զոհրաբը հաւանեց այդ համարձակ խօսքերին և
զուարթ սրտով պատուէր տուաւ մի լաւ ճաշ պատրաս-
տելու. նա կամենում էր թշնամու գալուստը տօնել իր
մտերիմների շրջանում:

Այն ինչ պարսիկներն արդէն վրաններ կանգնել ու
բանակել էին բերդի հանդէպ: Երբ ամեն բան կարգի ըն-
կաւ, սպարապետը գնաց թագաւորի մօտ և ասաց նրան
ժպտալով.

«Այսօր ես մեր բանակում էլ անելու բան չունիմ:
Այժմ ուզում եմ գնալ տեսնել այդ Զոհրաբին Սպիտակ
բերդում. սիրտս չի հանգստանալ, մինչեւ անձամբ ըլտես-
նեմ այդ հրաշալի պատանուն: Ինձ անհրաժեշտ է իմա-
նալ, թէ ով է այդ թուրքի լակուն և արգեօք կ'արժէ,
որ նրա հետ կուուելու համար ես իմ Ռաշի վրայ հեծնեմ:
Արձակիր ինձ, ով Քէլքաւուս. ես տաճկի շորեր կըհագնեմ,
և ոչ ոք ինձ չի ճանաչել գիշերով»:

Ճահը ծիծաղեց և ասաց. «Թուրքի զգեստով էլ Ռուս-
տէմն իրանի աստղը կըմնայ. գնա, Տէրը լինի քեզ հովա-
նի: Ցերեկը դու մեր իրանի բազուկն ես, գիշերն էլ՝ նրա
աչքը»:

Ռուստէմը՝ տաճկի լայն հագուստով, գլխին մեծ չալմա
կապած, թաքուն դուրս գնաց բանակից և անտես մտաւ
Սպիտակ բերդը: Այնտեղ Զոհրաբ պատանին, ջահերի լու-
սով լուսաւորուած, ուրախ ընթրիք էր վայելում. սաղա-
ւարտի փոխարէն՝ նա իր սիրուն զլխի վրայ մի պսակ ու-
նէր, և իր շուրջը, երգ երգելով, բազմած էին նրա զօր-
քի մեծերը:

Նրա ձախ կողմը բազմած էր Բարձան լրտեսը, որ
ոչ մի վայրկեան չէր հեռանում նրանից. աջ կողմից՝ նրա
Զէնդ անունով ազգականը՝ մի հաւատարիմ բարեկամ, ո-

րին Զոհրաբի մայրը խնդրած էր լաւ հսկել պատանու վրայ և իմաստուն խրատներով օգնել նրա անփորձութեան։ Բոլոր ներկայ գտնուողներից միայն Զէնդն էր անձամբ ճանաչում Թուստէմին, և այս պատճառով էր Թեհմինան յատկապէս նրան յանձնել ուղեկից լինել իր որդուն, և խնդրել, որ իրան հասնելուց յետոյ՝ աշխատէ ծանօթացնել նրան հօրը հետ։ Լուռ նստած էր խոհեմ մարդը զուարթամիտ պատանու մօտ և դարանամուտ յովազի պէս լրտեսում էր շրջակայքը։ Յանկարծ դարպասի մութ կամարի տակ Զէնդը նշմարեց մի անծանօթ կերպարանք, որ կասկածելի երեցաւ իրան։ Ինչո՞ւ էր այդ տաճիկն անշարժ կանգնած ամենախաւար անկիւնում։ Ինչո՞ւ չէր մօտենում սեղանին, չէր մտնում ջահերի բոցով լուսաւորուած շրջանի մէջ…

Զէնդը ոտքի ելաւ իմանալու, թէ ովէ այն եկաւորը, և ապշելով տեսաւ մի բարձրադիտակ, վայելչաձեւ ու քաջակազմ տղամարդ, որի նմանը միայն մի անգամ տեսած ունէր իր կեանքում, և յատկապէս այն գիշերը, երբ Թուստէմն ընթրիք էր անում Սեմէնգանի մեծերի հետ։ Այն ժամանակ Զէնդը մեծարոյ հիւրի կողքին էր նստած։ Անհնարին է, որ այս տաճիկը Թուստէմը լինի, սակայն մի հրաշալի նմանութիւն կար երկուսի մէջ…

«Ո՞վ ես դու», գոչեց Զէնդը լրտեսին։ «Ինչո՞ւ ես մը թութեան մէջ խարիսխում։ Հապա տեսնեմ երեսդ։»

Թուստէմը ոչ մի պատասխան չըտուաւ։ Զէնդը քաշեց նրա վերարկուից և կամենում էր բունի մօտեցնել ջահերին։ Այն ժամանակ Թուստէմը վերցրեց բունցքն և այնպիսի մի հարուած տուաւ Զէնդի գլխին, որ սա ճիկ ըլհանած շնչասպառ գետին ընկաւ։

Զոհրաբը, չիմանալով թէ ուր մնաց իր աղգա-

կանը, երկու մարդ դրկեց, որ նրան կանչեն։ Գնացողները մեռած գտան թշուառին դարպասի մութ անկիւնում և Զոհրաբի մօտ բերին նրա արիւնաթաթաւ դիակը… Ուրախ ընթրիքը վերջացաւ… Զոհրաբը, անհնարին ցաւով համակուած, պլոկեց գլխի պսակն ու ողբագին ձայնով վայեց։

«Եղոնկ ինձ, ով գործեց այս սոսկալի ոճիրը։ Դու եկել էիր ծանօթացնելու ինձ հօրս հետ, ով հաւատարիմ, սիրելի Զէնդ, և այժմ ընկած ես ոտքերիս տալ՝ անշնչացած ու գունատ, մտերիմներիդ շրջանում իսկ սպանուած… Երդում եմ լուծել արեանդ վրէժն և ջախջախել չարագործին, ով էլ լինէր»։

Զէր զգում Զոհրաբը, թէ ում էր մահ սպառնում—ոհ, չէր գուշակում, թէ իր օրհասն էլ հեռու չէր…

Առաւոտը որ լուսացաւ, նա դարձեալ ելաւ աշտարակի գագաթը, որտեղից բոլոր պարսից բանակն երեւում էր։ «Այստեղ բերէք չաջիրին», հրամայեց նա. «գուցէ նա ճանաչէ իմ հօրը»։

Գերուած բերդապահն աշտարակի վրայ բերուեցաւ, և Զոհրաբը, նրա կապանքն արձակելով, ասաց. «Ճաջիր, ես քեզ ազատութիւն կը շնորհեմ, եթէ անսուտ ճշմարտութեամբ մի առ մի պատասխան տաս հարցերիս։ Իսկ եթէ սուտդ բունեմ, վայ քեզ—հէնց այսօր կեանքիդ արևը կը մարեմ»։

Ճաջիրը տրտում պատասխանեց. «Աւելորդ են խօսքերդ։ Հարցուր, և ապա թէ կ'իմանամ—արդեօք կ'արժէ, որ այդ պալմանով կեանքս գնեմ»։

Եւ Զոհրաբը սկսաւ հարցնել. «Ո՞ւմ է պատկանում այն հոյակապ վրանը բանակի բուն կենդրոնում։ Բոլորովին ոսկեհուռ է այդ վրանը, գմբեթի վրայ նստած է մի

ոսկէ արծիւ և ճիրաններում բռնած ունի արեգակի պատկերը կրող մի դրօշակ»:

Գերին վեհութեամբ գլուխը բարձրացրեց և ասաց. «Այնտեղ նստած է շահերի շահն իր մեծափառ վեհութեամբ: Երկու թաւարաշ առիւծ է կանգնած նրա կրկին դռների առջե, և ոչ մի օտարական չի յանդզնիլ մօտենալ, որ իսկոյն չըլոշատեն»:

«Իսկ ոսկէ վրանի ձմիւ կրղմը», կրկնեց Զոհրաբը. «Ով է նստած այդ արծաթէ վրանում»:

«Ֆերաբորսը՝ շահի աւագ որդին և նրա սրտին ամենամօտիկ էակը», ասաց Հաջիբը:

«Իսկ այն սև վրանը. սուրհանդակները շարունակ մտնում ու գուրս են գալիս. շուրջը կանգնած են հարիւրաւոր թիկնապահներ»:

«Դա արքունի զօրապետ Թուսի վրանն է.. նրա արտօնութիւնն է միշտ շահին մօտիկ նստել բանակում»:

«Հապս ումն է այն կարմիր վրանն և ով է այն ծերունին, որ նստած է մուտքի մօտ: Նրա շուրջը կանգնած են բազմաթիւ շքեղ զինուորներ, որոնք նրան գլուխ են տալիս, հօր նման պատուելով»:

Հաջիրի սրտից խոր հառաջանք դուրս թռաւ: «Դա գուղէրսն է», ասաց նա, «մի պատուական ծերունի, որ հարկաւ նեցուկների կարօտ չէ, որովհետև նրա շուրջը կանգնած են իր եօթանասուն և ինն որդիքը, ութսուներորդն էլ ես եմ՝ կալանաւոր, թշուառ գերիս»:

Սուր աչքով դիտեց Զոհրաբը Հաջիրին և գոչեց. «Ճըշմարիտն ասա ինձ, և այսօր խոկ եղբայրներիդ կրմիանաս»:

«Ճշմարիտն ասա ինձ», կրկնեց Զոհրաբը յուզուած սրտով, «և յայտնիր թէ ումն է այն կանաչ վրանը: Դըրան նայելիս՝ ասես թէ մի յուսոյ նշով է ճառագալիթում

սրտիս մէջ: Վրանի առջեւ կանգնած է մի սպառազէն տղամարդ, որ բոլոր իր ընկերներից ամբողջ գլխով բարձր է: Նրա կողքին տրափում է մի երիվար և վրնջում տիրոջ նայելով, որ շոյում է նրա բաշր: Հսկայի կշտին սուր է կախուած և աջ ձեռին բռնած ունի մի հաստ մկանդ, որ հարկաւ միայն ինքն է կարող ճօճել—ուրիշ ոչ ոք: Անշուշտ ամբողջ իրանին յայտնի կըլինի այդ մարդու և իր նժոյզի անունը, և եթէ ես ում և իցէ մենամարտի կանչելու լինիմ, անտարակոյս դրան կընտրեմ: Դէ ուրեմն շուտ ասա—ինչպէս է կոչվում այդ հուժկուն»:

«Ինչին է պէտք այս տաճկին մեր պետութեան փահագէվանի անունը», մտածեց Հաջիբը. «Մի դուցէ միտքը դրած լինի նրան էլ այնպէս կործանել, ինչպէս որ ինձ տապալեց, և կամ, ով զիտէ, ոչնչացնել նրան նենդութեամբ... Ոչ, ես չեմ մատնիլ մեր իրանի պարծանքը»:

«Զաւը եմ ճգնաւմ մտաբերել—լսած եմ արդեօք Երբ և իցէ դրա անունը», պատասխանեց երիտասարդ գօրականը: «Գուցէ նա օտար երկրից եկած լինի մեր բանակը, մինչ ես գտնվում էի Սպիտակ բերդում»:

«Ասա ինձ այդ դիւցազնի անունը», կրկնեց Զոհրաբը սաստկութեամբ, կարծես ամենելին ուշ ըրդնելով նրա խօսքերին:

«Ես նրան խսպառ չեմ ճանաչում», թոթովեց Հաջիբը:

Պատանին անբաւական լուռ կեցաւ: Մօր լիշտակած բոլոր նշանները գտել էր. պակաս էր միայն անունը՝ վատահութիւն ստանալու համար, թէ այն զիւցազն էր իր Ռուստէմ հայրը, և ոչ այլ ոք: Նա, բարկութիւնը զսպելով, շարունակեց հարցմունք անել,—և Հաջիրը սուոյդ ասում էր, ինչ որ զիտէր իւրաքանչիւր վրանի մասին: Բայց յանկարծ Զոհրաբը զայրանալով բացագանչեց.

«Խաբում ես ինձ, թշուառական։ Դու ամենքին առուանեցիր, բացի Ռուստէմից։ Դու նենգութեամը թաքցընում ես այն միակ անունը, որ ես ուզում եմ իմանալ։ Եթէ այն վրանի առջև կանդնած հական Ռուստէմը չէ, հապա որտեղ պիտի լինի նա այժմ։ Ո՛հ, ասա ինձ, թէ այդ նա է, և դու ինձնից առատ պարզե ընդունելով հէնց այսօր ազատութիւն կըստանաս։ Ռուստէմը չէ այն կանաչ վրանի առջև կանդնած մարդը»։

«Ե՛հ, ինչո՞ւ ես այդքան հետամուտ լինում Ռուստէմին», ասաց Հաջիրը. «մի փափագիր հանդիպել նրան, եթէ ոչ, հաւատա, ինչքան էլ դու զօրեղ լինիս, նա քեզ ՚ի չիք կըդարձնէ։ Բայց քո բախտից՝ փակէվանը չէ գտանվում բանակում, նա գժտուել է շահի հետ և կանգիստ նստած է իր Սաբուլիստան աշխարհում—միամիտ եղիր այդ մասին»։

«Պիտի արհամարհեմ սպառնալիքդ», մտածում էր զերին, «և եթէ ինձ սպանելու էլ լինիս, գոնէ արիւնովս մաքրած կըլինիմ Գուդէրսի ութսուն որդիներից ամենավատը հանդիսանալուն նախատինքը»… Իսկ Զոհրաբը թիկունքը գոռողաբար նրան դարձնելով. «Դէ լաւ», ասաց ինքն իրան. «եթէ ոչ ոք չէ կամենում ասել ինձ, թէ որն է հայրս, ես ինքս կ'երթամ նրան գտնելու»։

Ուժդին ցասմամբ վայր իջաւ նա աշտարակից, իսկ Հաջիրը շղթայակապ իր արգելանը տարուեցաւ։

7.

Պատանի Զոհրաբը՝ ոսկեզօծ սաղաւարտը գլխին հագած, սրարշաւ դէպի բանակը սուրաց։ Խթան ստանակով զայրութից, նա ինքն էլ խթան էր տալիս նժոյզին։ Բանակի բոլոր զինուորները ցիր ու ցան եղան այդ փոթոր-

կալի արշաւից. ոչ մէկը սիրտ չարաւ նետ ձգելու այդ ամենի ասպետի դէմ—ամենքի ձեռքը կաշկանդուել էր սարսափից։ Արևափայլ պատանին ոլացաւ ամենաբարձր պատնէշի վրայ, որով պատած էր բանակը, և այնպիսի ձայն արձակեց, որ միայն գերեզմանի մեռելները կարող էին չըլսել։)

«Ո՛վ շահ», ասաց նա, «որ փառք ու շքով նստած ես բանակիդ մէջ, արդեօք զօրութիւնդ ինչպէս կրիխի արձակ ու բաց դաշտի վրայ։ Ինչո՞ւ ես զօրքդ փարախում փակել. այդ տեղ ես միայն ապահով կարծում քեզ գայլից… Զինուորներդ ոչխարի պէս փախուստ տուին իմ առջև և գոմերի մէջ պահուեցան։ Միթէ ձեր մէջ մի մարդ չը կայ, որ Զոհրաբի դէմ խիզախէր… Ես երդուել եմ Զէնդի մահուան վրէժը հանել սպանողից. թող նա գուրս գայ։ Եթէ չես կամենում մատնել նրան իմ ձեռքը, զոնէ նրա փոփարէն մի ուրիշ մարդ առաքիր, բայց տես, որ լաւերից լաւը լինի, եթէ ոչ ես ինքս բանակիդ մէջ կընեմուիմ և ոսկի վրանդ կըպաշարեմ, ընայելով առիւծներիդ։ Ես տէդով վայր կըգլորեմ այդ վրանիդ արեգակն և շներիս առջև կըձգեմ»։)

Քէլքաւուսը սարսափած վայր թուաւ թախտից և գոչեց. «Ճուտ արէք, Ռուստէմին այստեղ կանցեցէք, որ գայ սանձէ այդ ստահակ պատանուն»։

(Եւ շտապ տագնապով սուրհանդակներ գուրս վազեցին շահի վրանից և շնչսպառ թուան դէպի Ռուստէմի վըրանը… Սակայն դեռ ոչ մէկն էլ չէր հասել նրան, երբ սպառազէն փակէվանը, Թաշի վրայ աշտանակած, արդէն սրանում էր հեգնաբանող պատանու դէմ։

Ահա մի նետընկէցի անջրպետով բաժանուած՝ հայրն ու որդին լուռ կանգնեցան իրար դէմ և սկսան չափել

մինը միւսին ռազմատենչիկ աչքերով։ Անշարժ են նրանք։ Սակայն երկու կողմի յովտակներն, իրանց սիրուն գլուխները բանի յառաջ ձգելով, ուրախ վրնջում են իրար դէմ։ Ո՞վ հրաշք—անբան անսառունների մէջ խօսում էր արենակութեան հզօր ձայնը, որ խեղդուել էր մարդկանց մէջ դիւալին բարկութիւնից։

Երկուսաեք զրահավառ զօրականները գունդագունդ հաւաքուեցան նայելու մենամարտին, որ շուտով պիտի բորբոքուէր։ Անժոյժ Զոհրաբն առաջինը սկսաւ խօսել.

«Ուրեմն գու ես, որ իմ դիմամարտը պիտի լինիս։ Յիրակի գու հերոսական պատկեր ունիս, որի նմանն ես օրումս չեմ տեսել, և եթէ մենք երկուսս միմեանց հետ գուպարենք, այլ ևս ոչ չի հարկաւորիլ մեղ իրանից և թուրանից։ Եկ ուրեմն ազնիւ մենամարտով վախճան դընք մեր ազգերի պատերազմին։ Դու տեսնում ես, որ երկու հզօր պետութիւնների ամենալաւ քաջերն անհամբեր մեղ են դիտում։»

Տարօրինակ արձագանդ տուին Թուստէմի սրտում այդ ձայնի հնչիւնները, և նա, բացասական նշան տալով, իր զրահապատ աջ բազուկի բարձրացրեց։

«Հանդարտ, ովք հրաբորք քաջ պատանի», գոչեց նա. «Ես ինայում եմ գեռափթիթ հասակիկ։ Իմացիր, որ այս բազուկս ոչ մի ժամանակ չէ յաղթուել. ում վրայ որ սա ընկել է, այլ ևս գետնից չէ վեր կացել։ Ուստի լաւ կ'անես որ վերագառնաս և գօրքիդ աճենահուճկու զինուորներից մէկին զըկես ընդգէմ ինձ։ Թող նրա հետ կուուիմ ես. իսկ քեզ նման մի տհաս մանկան յաղթելը բնաւ պատիւ չէ ինձ համար։»

Կաս կարմիր կտրեցաւ Զոհրաբն ամօթից, և ոսոխին մօտենալով, արտասանեց հաղիւ զսպուած բարկութեամբ։

«Ես չեմ նահանջիլ, այլ միայն մի բան կըհարցնեմ քեզանից, և դու պարտական ես պատասխան տալ։ — Դո՞ւ չես արդեօք Ռուստէմ մ իահլէվանը։ Ո՞հ, ասա ինձ, արդեօք դու չեմ այն դիւցազնը, որին ոչ ոք դեռ չէ յաղթել մենամարտում։»

Բաւական էր մի բառ միայն, մի փոքրիկ բառ, որ վէճն ուրախալի և երջանիկ վախճան ստանար. սակայն Թուստէմը չուզեց այդ տենչալի բառն տսել... Յանկարծ մի սւաթուր թախիծ էր տիրել նրա հոգուն։

«Եթէ ընկնիմ այս երեխայի ձեռքից պարտուած», մտածում էր նա, «թող լուր ըլհասնի Սեմէնգան, թէ Ռուստէմն էր դրա սպանածը, իսկ եթէ ես գլորեմ մանկահասակ ոսոխիս, դեռ ժամանակ կ'ունենամ յայտնելու նրան ով լինելս։»

«Ես Ռուստէմ է ը չեմ», ասաց նա, չար ոգուց գըրգուելով։ «Թուստէմը մի իշխան է, իսկ ես միայն մի զինուոր. երէկ ուղարկել էին ինձ Սպիտակ բերդը լրտեսելու, և ես այնուեղ հարուած տուի ձեր Զէնդին, որ ուզում էր մատնել ինձ։»

«Դու ես Զէնդին սպանողը, գու», որոտաց քաջ պատանին. «Ուրեմն ինչու հէնց սկզբից չասացեր ինձ այդ բանը։ Այժմ արդէն աւելորդ է խօսելը. պատրաստուիր և աղօթք արա, որ Սստուած Թուստէմի զօրութիւնը շնորհէ քեզ, եթէ ոչ բանդ արդէն պըծած է։»

Պատանին արագ աջ կողմ թռաւ, Թուստէմը՝ ձախ։ Մի նետընկէցի հեռաւորութեամբ նրանք իրար դէմ կանգ առին, նիզակներն ուղղեցին և միմեանց վրայ խոյանալով, ընդհարուեցան ինչպէս երկու որոտագոչ փոթորիկ։ Երկուսի նիզակներն էլ փշուր-փշուր ջարդուեցան, բայց երկու ասպետներից մէկն էլ թամբում ըլդողաց։ Անուհետեւ ո-

սոխները որի գիմեցին և վերջապէս պղնձակուռ մկունդի:
Ինչ որ նկալն էր անվնաս թողել՝ այն կտրեց սուսերը,
և ինչ որ սա էր խնայել՝ այն ջախջախեց մկունդը: Ոչ մի
օղակ ողջ ըրմնաց կռւողների վերտի վրայ, ոչ մի փետուր՝
սաղաւարտի վրայ. քրտինքը հեղեղի պէս հոսվում էր հե-
ծեալներից և նժողներից: Բիւրաւոր մարդիկ ակնապիշ
դիտում էին՝ այս ամենի մենամարտը, բայց ոչ մի կողմից
յաղթանակի ձայն չէր հնչում: Գուպարողները մէկը միւ-
սին արժանի էին: Նրանք էլ իրանց նժողների պէս մի
և նոյն զարմիցն էին և չէին ուղում իրար տեղի տալ:
Վերջապէս նրանք, ուժից ընկած, ստիպուեցան դադարել,
և շնչասպառ նժողները հեռացրին իրանց տէրերին այդ
ապարդիւն մաքառումից:

Զոհրաբն ասում էր իրան, սիրտը վշտով դառնացած,
«Անհնարին է, որ այդպիսի կատաղութեամբ ինձ հա-
րուածներ տուողը հայրս լինի: Թէկ մօրս ասած նշաննե-
րը բոլորն էլ ճշմարտուեցան, սակայն գիւցազնի դառնա-
շունչ ցասման մասին նա ինձ ոչինչ չէր ասել: Դա չէ
կարող Ու ու ս տ է մ ը լինել. վասն զի մի այդպիսի մարդ
երբէք այնքան սէր չէր աղդիկ թեհմինալի բարի սրտին»:

Իսկ Ուուստէմը մտածում էր. «Եթէ դա որդիս լի-
նէր, արդարեւ ինձ անարժան չէր լինի: Բայց որդիս չէ
դա: Անհնարին է, որ թեհմինան առանց ոսկէ ապարան-
ջանի ինձ մօտ առաքէր պատանուն: Սակայն մվ էլ լինի,
այսօր նա ինձ լաւ տրորեց: Զգուշացիր, դու գորշգլուխ:
Դեռ ոչ մի կռւում չէ պատահել, որ այս օրուայ պէս
նեղն ընկած լինէիր: Որքան ամօթ կըլինէր ինձ, եթէ այդ
մանուկն ինձ յաղթէր—և լուրը հասնէր Սեմէնզան՝ որ-
դուս ականջը: Զոհրաբը գեռ շատ փոքր է, իմ կարծիքով՝
հաղիւ տասնչորս և կամ տասնհինգ տարեկան: Այդ հա-

սակում ես դեռ չէի կարող նրա պէս սաստիկ դմբոց տալ»:

Իւրաքանչիւրն այդպիսի ծանր մտքերով յառաջ էր
գնում. երեկոյեան մարտը պիտի նորոգուէր:

8.

Մինչդեռ Զոհրաբը կազդուրիչ քնով հանգիստ էր
տալիս իր մարմնին, Ուուստէմը զինադուլից օգուտ քա-
ղեց՝ գնալու մօտակայ հովատը, ուր երբեմն մի տա-
քօրինակ հանգիպումն էր ունեցել, որ և այսօր նորից
լիշեց: Այն ժամանակ—թերեւս մի քանի տարի առաջ—
Ուուստէմն այնքան զօրեղ էր, որ նեղութիւն էր զգում իր
ուժից, և այն քարտա ձորը գնալիս այնպէս ծանր էր
ոտք դնում, որ ամեն մի քայլին մինչև պճեղները կըր-
վում էր պինդ գետնի մէջ: Այն ժամանակ էր, որ յան-
կարծ մի զուարթ ծիծաղ լսեց նա, և աչքերը վերցնելով
մի ոգի նշմարեց, որ նոյն ձորի շահապն էր: «Ուու-
ստէմ», ասաց շահապը, «այդ ոյժը, որ տուել է քեզ մայր
բնութիւնը, անչափ շատ է մէկի համար: Դա քեզ բնաւ-
օգտակար չէ, այլ ճնշում է քեզ: Դրա մի մասը դու ինձ
տուր. ես կըպահեմ, և երբ որ քեզ պէտք լինի, կըգաս,
նորից լետ կ'առնես»:

Փակէվանը տուաւ շահապն իր զօրութեան աւելորդ
մասը, որ նա պահէ: Այժմ գնում էր լետ ուղելու այդ
պահ տուած բարիքը, որովհետև վախենում էր իր ամբողջ
զօրութիւնը ձեռք ըըբերած կրուի զուրս գալ Զոհրաբի դէմ:

Զահապը նրա ձայնը լսեց թէ չէ՝ յառաջ եկաւ և
ասաց. «Լաւ կ'անես, որ զօրութեանդ այդ մասն ինձ մօտ
թողնես՝ այս ժայռի ծերպի մէջ: Այստեղ նա աւելի ապա-
հով կըմնայ, քան ձեռքումդ: Այս ծեր հալօք ինչու ես
ուզում բեռնաւորել քեզ դրանով»:

«Յետ տուր», հրամայեց վահկվանը: «այսօր ես կարու եմ բոլոր ուժիս, որ ստացել եմ բնութիւնից: Տուր, ասում եմ, և մի ստիպիր որ սպասեմ»:

«Թող այդպէս լինի», պատասխանեց շահապը. «դու կըստանաս պահ տուած ոյժդ, բայց իմացիր—դա քեզ բախտ չի բերիլ: Այդ առոյդ զօրութիւնը միայն փորձանք կըբերէ քեզ, որովհետև չէ յարմարվում հասակիդ, և միայն երիտասարդ կտրճն է վայելուչ...»

Մինչ Ռուստէմն ու շահապն իրար հետ այսպէս վիճում էին, պատանի Զոհրաբը քնով կազդուրուած վեր կացաւ իր տախտից: (Այժմ ոչ մի սաղաւարտ չէր զարդարում նրա դլուխը, ոչ մի զրահ չէր թաքցնում նրա հուժկուանդամների գեղեցկութիւնը: Մի քսան տարեկան երիտասարդի էր նմանում նա: Այդպէս) մօտեցաւ նա Բարմանին և ասաց.

«Այն առիւծի պէս ուժեղ մարդը, որի հետ նորից պիտի կուռիմ, զօրութեամբ ինձ հաւասար է: Նրան տեսնելիս՝ մի անասելի զգացմունք է վառվում սրտիս մէջ: Ես չեմ կարող, ես անգօր եմ ՚ի բաց վանել այս միտքը, թէ նա է իմ Ռուստէմ հայրը: Ո՞հ, Բարման, աղաջում եմ քեզ, ասա ինձ այդ զիւցազնի անունը: Անուանիր ինձ այդ մարդուն, որ ես զարշելի հայրասպանութեան ոճիր ըրգործեմ: Դեռ մի քանի րոպէ առաջ նրա զրկի մէջ տեսայ ինքս ինձ երտումս, որ այնպէս քաղցը էր և զմայլական: Ո՞չ, ես չեմ կարող այդ մարդու հետ զուպարիլ»:

Ասաց և զայրութեամբ դէն ձգեց սուսերը. իսկ Բարմանը, որ Աֆրագիարին տուած խոստումը չէր մոռացել, հեղնական ժպտով պատասխանեց յուզուածին.

«Տղայական բան է թուում ինձ այդ երագը: Դու այդ հսկալի գրկում... զուցէ մօրդ ստինքն էլ ծծած լինիս ե-

րազումդ: Այդպէս են ահա երեխալի երազները. տղամարդն ուղիշ երազներ կըտեսնի... Եւ գեռ ինչե՞ր պիտի լսեմ: Կամենում ես լի՞տ կանգնել արդէն սկսուած մենամարտից՝ միայն նրա համար, որ չեմ կարող ասել քեզ այդ լրտեսի անունը: Նա քեզ արդէն սպասում է և անշուշտ երկչոտ կ'անուանէ քեզ երկու բանակի դէմ յանդիման, եթէ չըգտնէ քեզ ժամադիր եղած տեղում... Այդպիսի նախատինք կըելուց լինելոց՝ դու ինչպէս պիտի յուսաս արժանի որդի երևնալու մեծ Ռուստէմին: Եւ ես հարցնում եմ, ինչ նշանակութիւն ունի ա ն ո ւ ն ասածդ ուզմի մէջ: Գետնով տուր այդ ծերին, դիր ծնկներդ նրա լանջին և ապա թէ հարցուր իր անունը. այս է մենամարտի հին կարգը»:

«Նեսգամիտն այդպէս խառնեց ճշմարիտն ու սուտը: Նա իրաւ կարողացաւ Զոհրաբի արիւնը բորբոքել և նրա պատուամիրութիւնը զրգուել: Թշուառ պատանին, խեղդելով սրտի մեղմ զգացմունքը, հեծաւ իր ձին և արձակուած նետի նման թռաւ իր եղկելի հօր ընդդէմ:

Ապշած նայում էր Զոհրաբը հակառակորդի երեսին, որովհետև երեկուալ ասպետը կարծես թէ մի թովչութեամբ փոխուած էր թռում իր աչքին: Արդեօք երեկոյեան վերջալուսի ցոլմունքն էր, որ այնպէս մատաղ էր երևցնում նրա հասակը... Զոհրաբն ասես թէ իր յատուկ դէմքը տեսնում լինէր հայելու մէջ... Այդպէս, այս, ճիշդ այդպէս պիտի երևնալ իր դէմքը, եթէ միայն փոքր ինչ աւելի հասակ ունենար: — Մայրն էլ միշտ այդպէս էր նկարագրել պերճ հսկալին, որ մի անգամից հրապուրել էր նրա սիրտը, հետը սիրով ամուսնացել և մի քանի ժամից լետոյ նրան սգաւոր ու մենակ թողել: Գարձեալ մի անգամ հրատապ փափագ զգաց պատանին՝ ընկնելու այդ մարդու գիրկն և

գոչելու հայրիկ, ինչպէս որ արել էր երազում։ Այլ ևս մի անգամ մօտեցաւ նա Ռուստէմին, մեկնեց աջն և ասաց հազիւ սքողուած յուզմունքով։ «Ասա անունդ, ով փահէվան։ Աղաջում եմ, յատնիր ինձ տոհմանունդ։ Մինչև այժմ ես՝ ՚ի զուր, հանգիստս կորյնելով, աշխատեցայ իմանալու այդ բանը, բայց ոչ ոք չասաց. ինդրում եմ—գոնէ դու լրումն տուր փափաղիս»։

Այսպիսի գորովալիր խնդրից լեռտոյ՝ Զոհրաբը դիւցազնի դժկամակ լուստիւնը տեսնելով, մեղմ ու հանդարտ ձախով աւելացրեց. «Չըինք թէ փոշմանած լինիս, որ երէկ ազգականիս սպանեցիր։ Եկ, կամացուկ ասա ինձ, թէ ներողութիւն ես խնդրում ինձնից, և ես սիրով կը մոռանամ մինչև այժմ պահած ոխս»։

Սակայն ինչպէս որ գարնանալին բողբոջները յանկարծակի թարշամում են բքաբեր ցրտից, այնպէս էլ Զոհրաբի գորոված սիրտը սառեցաւ հակառակորդի սուր խօսքերից։)

«Այդպէս չէր մեր պայմանը», ասաց ոսոխը խնդալով. «դու զղացած ես երեւում՝ ինձ մենամարտի կանչելուդ համար. բայց տեսնում ես, որ ես արդին գոտւորուել եմ մեր գուպարը նորոգելու։ Եթէ ուրեմն երկչոտներից մէկը չես, երկարախօս մի լինիլ, և գործ ցոյց տուր։ Դու շուտով կը լիս անունս. բայց չեմ կարծում, որ դա քաղցր հնչէ ականջիդ»։

Զոհրաբը փոթորկուելով մի կողմ թռաւ, և ըմբիշներն երկու կատաղի առիւծների պէս իրար վրայ յարձակուեցան։ Նրանց երկու մարմինները գարձան կարծես մի մարմին՝ մի հսկայական ստուար մարմին, գրկուած չորս հուժկու բազուկներով։ Ճնշուած կուրքքերի թառանչն ու հելքը հեռուեց անգամ լսվում էր և գետնի աւազը քրտնախառն արիւնով թրջվում. բայց դուպարողներից և ոչ մի-

նը տեղի չէր տալիս միւսին։ Սակայն յանկած Ռուստէմն իր ձեռքերն արձակեց, աջովն բռնեց որդու գօտուց և ինչպէս որ ծծկեր մանկան վեր-վեր է թռցնում դայեակը, այնպէս էլ նա մի գերմարդկալին ցնցումով օդի մէջ ճօճեց հզօր պատանուն։ Մի սովորման ճիչ լսելի եղաւ Սպիտակ բերդից—ցնծութեան աղաղակ տուին Իրանեան վրաններից—գոտում, գոչում, կանչ ու կառանչ բիւրաւոր կոկորդներից,—և գետին տապալուեցաւ Զոհրաբը։ Թուստէմը չոքեց նրա լանջքի վրայ, գաշունը շողաց իր ձեռում և շանթի պէս պատանու կուրքքը մխուեցաւ…

Զոհրաբը տկար ձախով հեկեկաց.

«Գոնէ այժմ ասա ինձ, ով մարդ, անունդ։ Ինչպէս որ այժմ քո դաշոյնն ինձ դիպաւ, այնպէս էլ Ռուստէմի սուրը մի օր անշուշտ քեզ կըդիպչի։ Անհնարին է, որ արեանս վրէժը ըրհանէ քեզնից Ռուստէմ հայրս, որովհետեւ դու սպանեցիր թէ հմինացի և նրա որդուն»։

Այս խօսքերը մահաբեր ոլաքների պէս Ռուստէմի սիրտը խոցեցին, և նա զարհուրած յէտ ցատկեց։

«Ի՞նչ էր, որ թոթովեց այս մանուկը. այ եղկելի, ովքեր են, ասացիր, ծնողներդ»։

Պատանին վերջին ոյժը հաւաքելով, հպարտութեամբ բացազանչեց.

«Ես Զոհրաբն եմ՝ Ռուստէմ փահէվանի և Սեմէնգանի արքայագուստը Թէհմինալի միակ որդին։ Մայր ինձ իմ հօր մօտ ուղարկելիս՝ տուել էր ինձ մի ոսկէ ապարանջան, իբրև նշան։ Այդ թանգագին լիշտակն ահա կրում եմ սրտիս վրայ, և ոչ թէ բաղկիս վրայ, ինչպէս որ մայրս էր ասել։ Ես կարծում էի, թէ սրտիս վրայ աւելի լաւ կըպահպանուէր պատերազմի ժամանակ»։

Թշուառ հայրը գողդողալով որդու հագուստը պատ-

ուեց և ահա տեսաւ նրա սրտին խրուած դաշոյնը, և դրան
հուպ՝ ոսկէ ապարանջը, որ ոռոգուած էր արիւնով:

«Զոհրաբ, Զոհրաբ, որդեակ իմ: Վայ ինձ, ես սպա-
նեցի քեզ», գոչեց Ռուստէմը մի ալսպիսի աղլողորմ հե-
ծութեամբ, որ կարեվէր առիւծի մոնշման պէս որոտաց.
յետոյ յաղթանդամ դիւցաղնը, միանգամայն ուժասպառ,
երերուելով փոռւեցաւ հոգեվար որդու մարմնի վրայ: Որ-
դին լսեց հօր ձայնն և արեգական փալի նման երջան-
կութեան ժպիտ ցոլաց իր գեղեցիկ գէմքի վրայ:

«Հայր իմ, ես զտայ քեզ», մրմնջեց նա. «ահա հանգ-
չում եմ դրկիդ մէջ, ինչպէս որ երազել էի: Լսեցէք, լսե-
ցէք, ովք բարեկամներ—Զոհրաբը զտաւ իր Ռուստէմ հօրն
և հանգչում է նրա դրկում»:

Նա, երանաւէտ ժպիտն երեսին, աչքերը խփեց, և ի-
րանի ու Թուրանի զօրականներն անբարբառ կանգնած
մնացին նրա անշնչացած մարմնի շուրջը: Ոչ ոք չէր
յանդնում ձեռք վերցնել Ռուստէմի գէմ, մինչեւ որ նա
ինքն, ասես թէ մի խոր քնից գարթնելով, մեռածին իր
զրկիցը վայր դրաւ և հանգարտ ոտքի կանգնեց:

«Տեսէք, ովք իրանի և Թուրանի իշխաններ», ասաց
նա տատանուելով. «տեսէք յայտնեցէք ձեր տիրոջը,
թէ ինչ արաւ Ռուստէմը մեր իրանի փառքի համար:
Քէյքառու շահի սիրուն նա իր միակ որդուն սպանեց: Ոչ
մի մահկանացու չէ կարող սրանից աւելի թանգ զոհ բերել իր
արքային, և այս գործով Ռուստէմի պաշտօնն էլ վերջանում
է: Պատմեցէք շահին, ինչ որ տեսաք. արշաւանքն աւար-
տած է: Գնացէք—թողէք Ռուստէմին իր որդու հետ»:

Նա հրամայական նշան տուաւ, և սպաւոր աւագնե-
րը հեռացան: Ռուստէմը մենակ մնալով, մինչեւ լոյս պա-
հապան նստաւ իր և Թէհմինայի որդու մօտ:

9. ուահը ուահին զիւանը ամ ենց շամանը
ուահը այս
Արշալուսին վրայ հասաւ Բարձմանն և սկսաւ լիօ-
սել դիւցազնի հետ, որի զօրութիւնը մի գիշերում բեկաւել
էր, և ընդ միշտ: Նրա նախկին և նոր զգեցած զօրու-
թիւնը շիջել էր Զոհրաբի վերջին շնչի հետ միասին, և
այժմ Ռուստէմը քամակը կրո մի ծերուկ էր՝ տխուր նըս-
տած անշունչ որդու մարմնի մօտ:

Սյսպէս գտաւ նրան և Քէյքառուս շահը, որ արևը
ծագելուն պէս մօտեցել էր պատնէշին: Կարեկից սրտով
նա ասաց. «Ո՞վ Ռուստէմ, ով լուսատուգ իրանի, իմ պե-
տութեան փահէվան, որ հարիւր անդամ մահ ես տեսել
աներկիւդ, վեր կաց, ապարդիւն ողբ ու յացով մի՛ մա-
շուիր: Լաւ է եկ, որգեկիդ գիահանքը պատրաստենք: Ես
կամենում եմ այնպիսի շքով պատուել նրան, ինչպէս որ
կըպատուէի իմ հարազատ դաւակին: Սաբուխտանի իշ-
խանին վայել է ոսկուց ու մարմարինից շինուած շիրիմ
ունենալ, և լունենալ: Իսկ դու սկալուց դագարիր և եկ
իմ ոսկէ վրանը, որպէս զի մնացածը միասին խորհենք»:

«Է՛լ խորհելու բան ըլկայ», ասաց Ռուստէմը. «Բար-
ման տաճիկը Թուրանի և Սեմէնգանի զօրքերը թող յետ
տանէ, որովհտեւ նրանք Զոհրաբի սիրուն էին այստեղ ե-
կած. և գու, ովք շահ, թող կըտաս, որ խաղաղ մեկ-
նին, — այս է վերջին խնդիրս: Իսկ որդուս թաղման հան-
գերձանքը ներիր որ ես ինքս կատարեմ: Վերցուր բա-
նակդ և թող միայն իմ վրանն և թիկնապահ զինուոր-
ներիս»:

Դիւցազնի պատիւը յարգելու համար՝ նրա կամքը
կատարեցին: Նոյն իսկ օրուայ երեկոյին նա արդէն մե-
նակ էր իր Սեւարդ եղբօր և մի քանի հաւատարիմ ըն-

կերների հետ։ Այժմ նա հրամայեց ոկկեհուռ զգեստ հագոցնել իր որդուն և պատել նրան ծաղիկներով, անուշահոտ խնկերով և ոսկենկար պատճառներով։ Եւ ապա թէ ասաց Սեւարդին.

«Ճնորհ արա ինձ Սեմէնդան յուղարկելու դիակը։ Տար նրան թէհմինայի մօտ, որ ամեն մայրերից թշուառնէ, և ասա նրան. Զոհրաբը գտաւ իր հօրը, և Ռուստէմը փորձեց որդու ոչքը կրուի ամեն տեսակներում։ Պատանին չունի ոչ մի արատ—միայն Ռուստէմի դաշոյնն է խրուած նրա կրծքին։ Ասա Սեմէնդանի իշխանուհուն, թէ ոչ մի հայր աւելի դառն չէ արտասվում իր որդեկին, քան Ռուստէմը՝ Զոհրաբին։ Արդ մեկնեցէք, զէնքերս ու վրանս վերցրէք. միայն Թաշիս թօղէք այստեղ։ Մինք երկուսս գեռ մի գործ ունինք անելու, որ ուրիշի օգնութեան կարօտ չէ»։

«Իսկ եթէ տանը հարցնելու լինին, թէ ինչ եղաւ Ռուստէմը».

«Ասացէք—մեղ այդ բնաւ յայտնի չէ», ասաց Ռուստէմը, հրաժեշտ տալով մտերիմներին...»

Զըգիտենք, թէ ինչ եղաւ իրանի հսկայագօր դիւցազնը... Արդեօք մի բան չէին ասիլ այդ մասին անդընդակախոր լեռները, որոնց մէջ երբեմն թաքնուած էին նրա զեղուն ուժերը . . .»

Վ Ր Ւ Պ Ա Կ Ն Ե Ր

եր.	տող վերեւից.	սիսալ.	ուղ.
6	15	«	խորուած խորոված
«	19	«	ստւերախիտ ստուերախիտ
13	11	«	Աստուած Աստուած
14	6	«	զւարթ զւարթ
25	9	«	դէսպանը դեսպանը
28	12	«	չ:



ԱՅՐՈՒԹՅՈՒՆ

Համար	Անուն	Վահագին	Տար	Տար
Հախովով	Հախովով	>	81	8
այսպատճեան	այսպատճեան	>	81	8
թառ	թառ	>	81	81
կղաւով	կղաւով	>	81	81
պարագ	պարագ	>	81	82
43	3	>	81	82

3172

2013

